Джон Киракосян, Алексей Дживелегов и его историко-публицистическое наследие. Предисловие доктора исторических наук Армана Киракосяна, Институт истории НАН РА, Е., 2007, 262 с.

Պատմաբանների յուրաքանչյուր նոր սերունդ սկսում է առաջընթացի այն բարձրակետից, ուր կանգ են առնում նախորդները: Նոր սերունդն առաջ է տանում և զարգացնում նախորդների ստեղծագործական արարումները, նրանց առաջադիմական միտումները: Սա է առաջընթացի շարունակության, հաջորդայնության փոխկանչի իմաստն ու բովանդակությունը:

Անցյալ դարի երկրորդ կեսի հայ անվանի պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի «Ա. Կ. Ջիվելեգովը և նրա պատմահրապարակախոսական ժառանգությունը» (ռուսերեն), որն առաջին անգամ հրատարակվեց Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի կողմից (1986 թ.), նվիրված է XX դ. առաջին տասնամյակների ռուս պատմագիտության ամենատաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ հայազգի Ալեքսեյ Ջիվելեգովի կյանքին ու գիտական գործունեությանը, խոշոր մի անհատականություն, որը շարունակեց ռուս մեծ պատմաբաններ Վ. Կլյուչևսկու, Վլ. Գերիեի և Պ. Վինոգրադովի գիտական ավանդույթները՝ իր ուսումնասիրություններով հասնելով համառուսաստանյան և համաշխարհային ճանաչման: Որոշելով գիրք գրել Ա. Ջիվելեգովի մասին՝ Ջ. Կիրակոսյանն իր առջև խնդիր էր դրել լուսաբանել նաև մեծ գիտնականի հրապարակախոսական գործունեությունը՝ առնչված հայ ժողովրդի քաղաքական պատմության հիմնահարցերին: Ջ. Կիրակոսյանի ստեղծագործական ծրագրի մեջ միաժամանակ մտնում էր (որպես ապագա գրքի հավելված) քաղաքական հայագիտության վերաբերյալ Ա. Ջիվելեգովի աշխա- տությունների, նրա հեղինակային և խմբագրած հոդվածների հրապարակումը, որոնք հրատարակվել էին “Армянский вестник” պարբերականում: Սակայն պրոֆեսորի այդ գաղափարը չիրականացավ. անժամանակ մահվան պատճառով գիրքը (1986 թ.) հետմահու լույս տեսավ առանց Ա. Ջիվելեգովի աշխատանքների: Եվ ահա, հաշվի առնելով ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում Ա. Ջիվելեգովի կյանքի և գործունեության մասին հետաքրքրությունը, ինչպես նաև այն իրողությունը, որ նրա հայագիտական աշխատությունները մեծ ավանդ են քաղաքական հայագիտության բնագավառում, առաջին հրատարակությունից 20 տարի հետո, պատմական գիտությունների դոկտոր Արման Կիրակոսյանի առաջաբանով գիրքը նույն ինստիտուտի կողմից հրատարակվեց երկրորդ անգամ, արդ արդեն այն տեսքով, ինչ տեսքով ծրագրել էր նշանավոր պատմաբանը՝ Ջ. Կիրակոսյանը: Այս գիրքը Ջ. Կիրակոսյանի գրած բազմաթիվ մշտամնա աշխատություններից վերջինն է, Ա. Ջիվելեգովի մասին գրվածներից լավագույնը: Գրքում ցույց է տրվում, որ իր գիտական գործունեությունը սկսելով որպես միջնադարագետ և ստեղծելով արևմտաեվրոպական միջնադարին վերաբերող հիմնարար աշխատություններ՝ Ա. Ջիվելեգովը նվիրվեց նաև Հայկական հարցի պատմության ուսումնասիրությանը: Նա ոչ միայն հանրաճանաչ պատմաբան, արվեստաբան, թատերագետ ու գրականագետ էր, այլև՝ տաղանդավոր թարգմանիչ ու խմբագիր: Եվ այդ ասպարեզներից յուրաքանչյուրում նա
հանդես է եկել որպես ինքնուրույն հետազոտող և ստեղծագործող:

Տակավին Մոսկվայի համալսարանում, միջնադարի մեծ պատմաբան Պ. Վինոգրադովի ազդեցությամբ պարզորոշ դարձավ Ա. Ջիվելեգովի հետաքրքրությունը որոշակի թեմայի՝ ուշ միջնադարում բուրժուազիայի վերելքի պատմության նկատմամբ: Երիտասարդ գիտնականի ինքնուրույն հետազոտությունների ար-

դյունքը եղան «Քաղաքային համայնքը միջնադարում» (1901), «Միջնադարյան քաղաքները Արևմտյան Եվրոպայում» (1902), «Միջնադարյան առևտուրն Արևմուտքում» (1904), «Իտալական վերածննդի սկիզբը» (1908), «Ժամանակակից Գերմանիայի պատմություն» (երկհատոր, 1908-1910) գրքերը: Ա. Ջիվելեգովը 1912 թ. մի շարք պատմաբանների հետ դարձավ "Голос минувшего" ամսագրի խմբագիր-հրատարակիչը: Նա մասնակցել է բազմաթիվ կոլեկտիվ աշխատությունների՝ «Նոր ժամանակի պատմության ընթերցանության գիրքը» (4 հատորով, 1910-1913), «Մեծ ռեֆորմը» (6 հատորով, 1910-1911), «Հայրենական պատերազմը և ռուս հասարակությունը» (7 հատորով, 1911-1912), «Ֆրասիացիները Ռուսաստանում» (3 հատորով, 1913) ստեղծմանը: 1915 թ. լույս է տեսնում Ա. Ջիվելեգովի «Ալեքսանդր Առաջինը և Նապոլեոնը»ժամանակին մեծ անուն հանած գիրքը:

Ջ. Կիրակոսյանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ տակավին Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ճանաչում ստացած գիտնականը միաժամանակ հասցրել է վարել Գրանատ եղբայրների հանրագիտական բառարանի խմբագրությունը, որի բազմաթիվ հատորներում լույս են տեսել պատմության և սոցիոլոգիայի վերաբերյալ նրա բովանդակալից հոդվածները:

Ա. Ջիվելեգովը մեծ գոհունակությամբ է դիմավորում Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունը, որն ինքնին շատ բնական է, քանզի, լինելով կադետական կուսակցության անդամ, նա բուրժուադեմոկրատական կարգերի ջատագով էր: Սակայն իրողություն է և այն, որ բոլշևիկյան հեղաշրջումից հետո Ա. Ջիվելեգովը հեռացավ կադետական կուսակցությունից և հարեց մտավորականության այն շերտին, որը քաղաքական նոր հասարակական կառույցի նկատմամբ լոյալ դիրք էր գրավել: 1919 թ. նա նոր պատմություն դասավանդեց Մոսկվայի համալսարանում, սակայն 1924 թ. արդեն իսկ տեսանելի վարչահրամայական մթնոլորտը նրան ստիպեց թողնել համալսարանը և որոշ ժամանակ դասախոսություն կարդալ թատերական ստուդիաներում և գրականության բարձրագույն դասընթացներում, որոնք գլխավորում էր Վալերի Բրյուսովը: 1932 թ. Ա. Ջիվելեգովը Լունաչարսկու անվան թատերական ինստիտուտում գլխավորում էր արտասահմանյան թատրոնի պատմության ամբիոնը: Նրա ջանքերով հետագայում «Ակադեմիա» հրատարակչությունը, ուր նա աշխատում էր 1933-1937 թթ., լույս է ընծայում առաջին անգամ ռուսերեն թարգմանված արևմտաեվրոպական բազմաթիվ կարևոր հրատարակություններ: Այդ տարիների իտալերեն բոլոր հրատարակություններն ուղեկցվել են Ա. Ջիվելեգովի առաջաբաններով, որոնք անզուգական պատմամշակութային և պատմագրական ակնարկներ են:

Ժամանակի ռուս պատմաբանները Ա. Ջիվելեգովի 1920-1930-ական թթ. ստեղծած պատմագիտական աշխատություններից առանձնապես կարևոր արժեք են համարում «Ֆրանսիական մեծ հեղափոխության բանակը և նրա առաջնորդները», «Դանթե Ալիգիերի», «Լեոնարդո դա Վինչի», «Միքելանջելո» մենագրությունները: Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայազգի ականավոր գիտնականը մնաց Մոսկվայում, շարունակեց իր գիտական և մանկավարժական գործունեությունը: Նշանավոր գիտնականը վախճանվեց 1952 թ., 77 տարեկան հասակում: Խորհուրդների երկրում նրա վաստակը «գնահատվեց». ընտրվեց ընդամենը ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: Բայց նա գոհ էր իր վիճակից, քանզի իր անելիքը կատարել էր: Ա. Ջիվելեգովը հեղափոխական չէր, բայց ինքնակալության հակառակորդ էր, ազատախոհ մի անհատականություն, որը պայքարում էր առաջին հերթին գիտության, լուսավորության և մշակույթի ասպարեզներում հետադիմական հոսանքների դեմ: Հասարակական կառուցվածքի և պատմական գործընթացի էության մասին նրա հայացքները կազմավորվել են Պ. Վինոգրադովի սոցիալական դպրոցի ազդեցությամբ: Պատմա-

գիտության մեջ լինելով տնտեսական մատերիալիզմի կողմնակից՝ նա մշտապես փնտրում էր ուսումնասիրվող երևույթի տնտեսական խորքերը՝ միաժամանակ մեծ նշանակություն տալով հոգեբանական, մասնավորապես հասարակական զարգացման առաջընթացի ապահովման գիտակցական գործոնին: Ա. Ջիվելեգովի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են երեք մեծ պատմաշրջան՝ միջնադար, վերածնունդ և նոր ժամանակաշրջան: Հասարակական կյանքի այն սկզբունքները, որոնցով առաջնորդվում էր Ջիվելեգովը, ազդարարված են նրա՝ «Քաղաքային համայնքը միջին դարերում» և միջնադարյան պատմության առավել լայն ընդգրկումով «Միջնադարյան քաղաքները Արևմտյան Եվրոպայում» ուսումնասիրություններում: Քաղաքների վերելքի գործընթացը նա բնորոշել է որպես XII-XV դդ. տնտեսական հեղաշրջում, որը ֆեոդալական տնտեսությունը փոխարինում է փոխանակային տնտեսությամբ: Նրա կարծիքով, քաղաքների առաջացման գործում վճռականը եղել է քաղաքային յուրահատուկ իրավունքի ներմուծումը, իսկ հետագայում տեղի է ունեցել այն, ինչը գիտնականն անվանել է «կոմունալ հեղափոխություն», որը հող է նախապատրաստել անմիջական ֆեոդալական կախումից քաղաքների ազատագրման համար: Եվ ըստ Ա. Ջիվելեգովի, իր էությամբ միասնական այդ գործընթացը տարբեր կերպ է ընթացել Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, մյուս երկրներում:

Ջ. Կիրակոսյանը Ա. Ջիվելեգովի պատմագիտական մտակառույցում մասնավորապես բարձր է գնահատում այն, որ այդ մտակառույցը զերծ է XX դարասկզբում նորաձևություն դարձած երևույթների մոդեռնիզացիայից: Ա. Ջիվելեգովը իր «Իտալական վերածննդի սկիզբը» գրքում ռուսական գիտության մեջ առաջինը Վերածննդի մշակույթի երևույթները դիտեց իտալական միջնադարից նոր ժամանակներին անցնելու սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների սերտ միակցության մեջ: Վերածնունդը, գրել է Ջիվելեգովը, տնտեսական հեղաշրջման հետ ամուր կապի մեջ գտնվող մշակութային հեղաշրջում է, որն արտահայտվում է անհատապաշտության աշխարհիկ տեսակետի աճման, եկեղեցական գաղափարի անկման և հին աշխարհի նկատմամբ հետաքրքրության ուժեղացման մեջ: Ա. Ջիվելեգովը չէր ընդունում «հումանիզմ» հասկացության տարածված մեկնաբանությունը՝ որպես ամբողջ Վերածննդին նույնական մի արտահայտություն, քանզի Վերածնունդը սկսվել է ավելի վաղ, քան առաջ են եկել առաջին հումանիստական բանաձևումները: Ջիվելագովը գտնում էր, որ հումանիզմն ավելին չէ, քան Վերածննդի հոսանքներից մեկը: Վերածննդի I դարը՝ նախավերածնունդը, տակավին ծանոթ չէ հումանիզմին իր իսկական տեսքով: Հումանիզմը, ըստ Ա. Ջիվելեգովի, ծագել է որպես հին աշխարհի ուսումնասիրություն այն ամենի հետ միասին, որ պետք է մարդուն ավելի մարդկային դարձնել, այսինքն՝ ավելի հարուստ բարոյականությամբ և լիարժեք՝ բանականության իմաստով:

Հասարակական աստիճանական զարգացումը քաղաքներում, ըստ Ա. Ջիվելեգովի, հանգեցրել է նրան, որ ստեղծել է ոգով ուժեղ, վառ անհատականության տեր, համարձակ ու անկախ մարդկանց նոր տեսակ: Եվ եկեղեցական հեղինակության, հիերոկրատական ավանդույթների ու ճգնավորական աշխարհայացքի ավերակների վրա հաստատվել էր անկախ, նույնպես հզոր, խիզախումներով և հաղթանակներով հղի, աշխարհիկ ոգի: Նկարագրելով ընդհանուր վիճակը, բացահայտելով սոցիալական հոգեբանության յուրահատկությունը, որն ընկած է հումանիստական գաղափարախոսությամբ կյանքի կոչված մշակութային գործընթացի հիմքում՝ Ա. Ջիվելեգովն անցնում է կենդանի մարդկանց, ցայտուն անհատականություններին, որոնց տիտանական գործունեությունը ստեղծել է Վերածննդի հոգևոր գանձերը: Դրանք են՝ Դանթեն, Պետրարկան, Բոկաչչոն, Բրունելեսկուն, Դոնատելոն և ուրիշները, հումանիստական նոր մշակույթի ստեղծողները:

Ա. Ջիվելեգովն ստեղծել է նաև ուշ Վերածննդի դարաշրջանի ևս մեկ խոշոր անհատականության՝ Նիկոլո Մաքիավելու կերպարը. Մաքիավելին մարտիկ մտածող է և պետական գործիչ, թեև նրա գործունեության մասշտաբը մեծ չէ և զիջում է մտքի ուժին: Ա. Ջիվելեգովը Մաքիավելու մեջ արդարացիորեն տեսնում է սոցիոլոգիայի՝ հասարակության մասին գիտության հիմնադիրներից մեկին, որը ձգտում է քաղաքականության համար ստեղծել գիտական հիմքեր: Նրա տրամաբանական անկախությունը ոչ միայն շփոթեցրել էր ժամանակակիցներին, այլև շատ դարեր անց կատաղեցրել է ճիզվիտներին, տանջել բարոյագետներին և քայքայել «բուրժուական գիտնականների ջղերը»: Ա. Ջիվելեգովը կարողացավ խորությամբ բացահայտել Մաքիավելու մտքի դիալեկտիկան, որը հանուն գլխավորի՝ ազգի փրկության, պատրաստ է պաշտպանել ցանկացած բռնակալություն, միաժամանակ հոգու խորքում մնալով ջերմեռանդ հանրապետական և քաղաքացիական ազատության կողմնակից: Մաքիավելին միասնական նպատակը բաժանեց երկու փուլի. նախ՝ երկրի միասնությունը, թեկուզև ազատության ժամանակավոր կորստյան գնով ձեռք բերված, ապա՝ հանրապետության և քաղաքացիական իրավունքների վերականգնումը: Ա. Ջիվելեգովը ցույց է տվել, որ XVI դ. Իտալիայում ստեղծված պատմական պայմաններում Մաքիավելին, այնուամենայնիվ, իդեալիստ էր: Հարկավ, նա պայքարում էր իր իդեալների իրականացման համար, բայց պատմության ասպարեզում գործող ուժերը նրանից ավելի զորեղ էին, և դասակարգային եսասիրական շահերը խանգարում էին, որպեսզի այդ սկզբունքները բարձրանան համազգային խնդիրների դրսևորման աստիճանին: Մաքիավելին բոլոր միջոցներով պայքարում էր ուժերը միավորել՝ հակազդելու ֆեոդալիզմի հետադիմությանը և օտարի ներխուժմանը: Ա. Ջիվելեգովը ցույց է տվել Մաքիավելու՝ իր հայրենիքի փրկության համար մարտնչող մեծ հայրենասերի իսկական մեծությունը՝ չթաքցնելով նրա բուրժուական սահմանափակությունը: Նա բացահայտել է Մաքիավելու ողբերգությունը, մարդ-Մաքիավելուն, որը ճիշտ էր հասկանում ազգի ու հասարակության հանապազօրյա կարիքները, որը փորձում էր խոսքով ու գործով (Մաքիավելին 1527 թ. Հռոմի կործանման համազգային աղետի պահին զինվոր էր ռազմաճակատում) միավորել ժամանակակիցներին հանուն իր երկրի ազատության, որը, սակայն, կրեց պարտություն: Ի դեմս Մաքիավելու ճակատագրի, Ա. Ջիվելեգովը ցույց է տվել իրական քաղաքական պայքարում փիլիսոփայի պարտության անխուսափելիությունը: Ն. Մաքիավելին, որն այնպես լավ գիտեր Իտալիան, նրա մարդկանց, հասկանում էր քաղաքականության ողջ մեխանիզմը, անուժ գտնվեց իրականության դեմ հանդիման: Պարզվեց, որ իր ամբողջ քաղաքական իրատեսությամբ հանդերձ, Մաքիավելին մի յուրօրինակ իդեալիստ էր: Ժամանակակիցներից չգնահատված՝ նա սերունդների կողմից զրպարտվել է իբրև քաղաքական եսապաշտ: Դասակարգային վերլուծության վրա հենված պատմականությունը օգնել է Ա. Ջիվելեգովին ցույց տալու այդ բարդ և նշանավոր գործչի իսկական կերպարը և պատմական նշանակությունը: Եվ նա դա արել է գաղափարական ամբողջատիրության ժամանակաշրջանում, երբ պաշտոնական գաղափարախոսությունը քարոզող տիտղոսավոր պատմաբաններն ու փիլիսոփաները Մաքիավելուն ֆաշիստական ուխտադրժության նախահայր էին համարում՝ Իտալիայի անկախության համար «նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսը ենթարկելով բացարձակացման և ընդհանրացման: Սակայն ժամանակն ամեն ինչ իր տեղն է դնում: Ջիվելեգով գիտնականի անանց արժեք ունեցող բազմաթիվ հիմնադրույթներ այսօր նույնքան արդիական են: Ջ. Կիրակոսյանի գրքում համոզիչ ցույց է տրված, որ որպես պատմության մեկնաբան կամ պատմությունն իմաստավորող, Ա. Ջիվելեգովը եղել է պատմական խոշոր և շրջադարձային գործընթացների գնահատման ու պատկերման վարպետ: Նա պատկանում էր պատմագիտության այն ուղղությանը, որն իր խնդիրը

տեսնում է ոչ միայն ճշմարտությունը հաստատելու, այլև հետազոտության արդյունքները մատչելի ու տպավորիչ մատուցելու մեջ:

Հիմնականում մասնագիտանալով Վերածննդի և Արևմտյան Եվրոպայի ընդհանուր պատմության մեջ՝ Ա. Ջիվելեգովը ուսումնասիրություններ և հրապարակախոսական հոդվածներ է նվիրել Հայկական հարցին, հայոց ցեղասպանությանը, այն համարել ամենախոշոր ոճիրը համաշխարհային պատմության մեջ՝ Չինգիզ խանի ու Թամերլանի ժամանակներից ի վեր: Մշտամնա արժեք ունեն Ջիվելեգովի այն մտքերը, որոնք վերաբերում են թուրքերի՝ մյուս ժողովուրդների աշխատանքի պտուղները յուրացնելուն, այն իրողությանը, որ նրանք օգտագործեցին դարերի ընթացքում դիզված հարստությունը, որ ժառանգել էին այն ազգություններից, որոնք կառուցել էին Բյուզանդիա կոչված պետությունը: Ա. Ջիվելեգովի մոտ Հայկական հարցը ներկայացված է ավարասփյուռ և խորտակիչ թուրք ցեղի գնահատման հենքի վրա, ցեղ, որի մոխիրներով ծածկված և արյամբ ներծծված ծխացող ավերակների տրամաբանական շարունակությունն էր հայոց ցեղասպանությունը: Թուրք ցեղն անցավ դարերի միջով՝ իբրև մի չարագույժ ամբոխ՝ հետնորդներին չթողնելով ոչ բարեբեր ուղերձ, ոչ էլ քաղաքակրթական մի գործ: Այս ու սրան հարակից հարցերի մասին է պատմում Ջ. Կիրակոսյանի գրքի «Ալեքսեյ Ջիվելեգովը և քաղաքական հայագիտությունը» գլուխը: Այստեղ վերլուծված են Ա. Ջիվելեգովի՝ Հայկական հարցին նվիրված աշխատությունները՝ գրքերն ու հրապարակախոսական հոդվածները, բարձր է գնահատված նրա կազմակերպած և խմբագրած “Армянский вестник” պարբերականի դերն ու նշանակությունը: Ցույց է տրված, որ իր մեծ հեղինակությամբ ու եռանդով նա շաբաթաթերթի շուրջ էր համախմբել հայ և ռուս առաջատար մտավորականության ներկայացուցիչներին, որոնք հանդես էին գալիս թուրքական վանդալիզմի դատապարտմամբ, Հայկական հարցի արդարացի լուծման օգտին:

Ամփոփենք. Ջ. Կիրակոսյանի գիրքը հայ պատմագիտական մտքի մնայուն արժեքներից է, որտեղ Ալ. Ջիվելեգովը իրավացիորեն գնահատված է որպես համաշխարհային չափանիշների գիտնական: Պատմական դեմքերի կերպարների կերտման վրա Ջիվելեգովն աշխատել է ավելի քան որպես գրող, այն տարբերությամբ միայն, որ եթե գրողի ստեղծագործության մեջ գերիշխում է վիպականը, ապա Ջիվելեգովի երկերում՝ պատմականը: Նա մեծ վարպետությամբ կարողանում էր բացահայտել արարքների իմաստն ու նշանակությունը, ի հայտ բերում բացահայտ ու գաղտնի շարժառիթները, պարզաբանում պատմական հերոսների, մեծ անհատների արարքներով պայմանավորված հոգեբանական ծանր ու բարդ գործընթացները:

Ա. Ջիվելեգովը գրական խոսքի վարպետ էր, տիրապետում էր մտքի նրբերանգներ հաղորդող հարուստ բառապաշարի: Այդ հարուստ բառապաշարով են գրված և՛ եվրոպական միջնադարին ու Վերածննդին նվիրված նրա ուսումնասիրությունները, և՛ Հայկական հարցին ու հայոց ցեղասպանության վերաբերյալ բարձրարժեք գիտական հրապարակախոսությունը: Ա. Ջիվելեգովը XX դ. առաջին կեսի հայ խոշորագույն պատմաբան-հասարակագետն էր, քաղաքական հայագիտության հիմնադիրներից մեկը:

Ջ. Կիրակոսյանի «Ալեքսեյ Ջիվելեգովը և նրա պատմահրապարակախոսական ժառանգությունը» գիտաքաղաքական տեսակետից պահանջված, արդիական գիրք է, ուստի ողջունում ենք նրա երկրորդ հրատարակությունը:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն. Բ.
Պատմական գիտությունների դոկտոր